Հավելված
ՀՀ փոխվարչապետի N 233 - Ա
որոշման

Ծ Ր Ա Գ Ի Ր

«ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ»

1.	Ծրագրի նպատակը	Լեռնային Ղարաբաղից տեղահանված և սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական աջակցության տրամադրում:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից:
3.	Բարեգործը	«Հիսուս Քրիստոսի վերջին օրերի սրբերի եկեղեցու Հայաստանի կրոնական համայնք» կրոնական կազմակերպություն, քաղ. Երևան, Վրացական փողոց 5, (ՀՎՀՀ՝ 00413679)
4.	Ծրագիրը կատարողը	«Հիսուս Քրիստոսի վերջին օրերի սրբերի եկեղեցու Հայաստանի կրոնական համայնք» կրոնական կազմակերպություն, քաղ. Երևան, Վրացական փողոց 5, (ՀՎՀՀ՝ 00413679)
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Հայաստանի Հանրապետության մարզեր, բնագավառը՝ սոցիալական
6.	Ծրագրի բյուջեն	20,000,000 դրամ
7.	Բարեգործություն ստացողը	Լեռնային Ղարաբաղից տեղահանված անձինք և սոցիալապես անապահով ընտանիքներ
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2024 թվականի ապրիլի 18-ից մինչև 2024 թվականի դեկտեմբերի 30-ը

9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Մննդամթերքի, հիգիենայի պարագաների, անկողնային պարագաների և դեղորայքի ձեռքբերում և բաշխում՝ 20,000,000 դրամ, նախատեսվում է իրականացնել 2024 թվականի ապրիլի 18-ից մինչև 2024 թվականի դեկտեմբերի 30-ը:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	1) սննդամթերքի ձեռքբերում՝ 8,250,000 դրամ 2) հիգիենայի պարագաների ձեռքբերում՝ 3,975,000 դրամ 3) անկողնային պարագաների ձեռքբերում՝ 4,625,000 դրամ 4) դեղորայքի ձեռքբերում՝ 3,150,000 դրամ
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Կազմակերպչական ծախսեր չեն նախատեսվում:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Համագործակցություն է նախատեսվում Հայաստանի Հանրապետության տեղական ինքնակառավարման մարմինների և Հայաստանի Հանրա-պետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հետ:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

04.04.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ